ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՎԾ-ԳՀԱՊՁԲ—18/10-1»

ք.Վեղի « 20 » փետրվարի 2018թ.

«Վեղու ծննդատուն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մաթևոսյանի, որը գործում է «կանոնադրության» հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Զաքարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 630760 (վեց հարյուր երեսուն հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասնօրյա աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վեղու ծննդատուն» ՓԲԸ	«Լիդեր Քոմփանի» ՍՊԸ
ք.Վեղի, Գայի 1	ք. Երևան, Դավիթաշեն 2թ., 13շ., 15 բն
ԱՇԻԲ Վեղի մ/ճ	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոցի մ/ճ
Հ/Հ՝ 247763031777	Հ/Հ 16043024016000
ՀՎՀՀ՝ 04104551	ՀՎՀՀ 00125923
Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան	Տնօրեն՝ Ա. Զաքարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են նախատեսվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված
«20» փետրվարի 2018թ. կնքված
N ՎԾ-ԳՀԱՊՁԲ-18/10-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի									մատակարարման		
Հ/Բ	CVP կոդ	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
8	39831243	լվացքի փոշի «Կալգոն» (հաբ) Calgon	reckitt benckiser LTD, Անգլիա	փոշի «Կալգոն» լվացքի մեքենայի համար. պաշտպանիչ միջոց լվացքի մեքենայի դետալների համար. 530գ . քանակը հավաքածուում 35	տուփ	5200	26000	5	ք.Վեղի, Գայի 1	5	
14	39839200	Գոգաթիակ Zambak	Zambak plastik Թուրքիա	կարմիր բռնակով և վերև ծռված եզրերով փոքրիկ բահի տեսք ունեցող տնտեսական գործիք: Օգտագործվում է սորուն մարմինները տեղափոխելու, լցնելու համար ինչպես նաև ավել անելու ժամանակ աղբը հավաքելու համար:	հատ	150	2250	15	Ստարտյոր	15	
15	39224331	Պլաստմասե դույլ 10լ OVALPLAST	Օվալպլաստ ՍՊԸ, Հայաստան	Պլաստմասե, 10 լ տարողության, անվտանգու թյունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի	հատ	780	5460	7	ք.Վեղի, Գայի 1	7	
16	42711160	Լվացքի թաս մեծ 40լ OVALPLAST	Օվալպլաստ ՍՊԸ, Հայաստան	Պլաստմասե, 40լ տարողության, անվտանգու թյունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված, Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի	հատ	2800	16800	6	ք.Վեղի, Գայի 1	6	
17	18421130	Բանվորական ձեռնոցներ Handcare	Household co., LTD, Չինաստան	Ձեռնոց տնտեսական, պատրաստված լատեք -սից. նախատեսված են սանիտարական անվտանգ աշխատելու համար, չափը L,XL , հաստությունը 0.6-0.9մմ., երկարությունը 300մմ-ից ոչ պակաս	զույգ	178	4450	25	ք.Վեղի, Գայի 1	25	
18	33721000	Միանգամյա ածելի «Բիք» մետալ 5հ, BIC	BICmetal LTD, ԱՄՆ	Միանգամյա օգտագործման ածելի «Բիք» Մետալ 1 սայրով և մետաղյա շերտով, տուփի մեջ 5 հատ	հատ	128	12800	100	ք.Վեղի, Գայի 1	100	
19	33761000	Զուգարանի թուղթ ռուլոնով Skarlet	Սկարլետ ՍՊԸ, Հայաստան	Երկշերտ կամ եռաշերտ, 9.8 սմ*12.5 սմ լայնության, ոչ պակաս 65մ, բաժանարար կտրվածքի հատվածը 14-15սմ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթեր- թից և այլ թղթերի թափոն- ներից, թույլատրված սան- հիգիենիկ ապրանքների պատրաստման համար, ալերգիա չպարունակող, գույնը սպիտակ, ռուլոնով: Անվտանգությունը, փաթե- թավորումը և մակնշումը ըստ ՀՀ կառավարության թիվ 1546-Ն որոշման	հատ	92	36800	400	ք.Վեղի, Գայի 1	400	
21	19641000	Պոլիէթիլենային տոպրակներ, պարկեր 30լ Armenia PLAST	Արմենիա պլաստ ՍՊԸ, Հայաստան	Պոլիէթիլենային տոպրակ աղբի համար, պատրաստված բարձր ճնշման պոլիէթիլենից. որի հաստությունը կազմում է 45 մկմ. 60լ: Փաթեթավորված օղակաձև, փաթեթում 20-25 հատ, գույնը սև: Արտադրությունը Ռուսաստան կամ համարժեք	հատ	11	7700	700	ք.Վեղի, Գայի 1	700	

22	30192210	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական,մեծ, Santa monika	սանտա Մոնիկա ՍՊԸ, Հայաստան	Գլանափաթեթված ժապավեն 48մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը 0.018-0.030մմ կամ 0.030-0.060մմ, երկարությունը 100մ	հատ	300	600	2	ք.Վեղի, Գայի 1	2
23	39715300	Ճկուն խողովակներ 1/2 " 40սմ NOVA	Nova plastik LTD Թուրքիա	Ճկուն խողովակ ½ "40սմ սառը ջրի ծորակների համար չժանգոտվող պողպատից, սանհանգույցի և ջրի միացման համար	հատ	550	16500	30	ք.Վեղի, Գայի 1	30
24	39715300	Ճկուն խողովակներ 1/2 " 60սմ NOVA	Nova plastik LTD Թուրքիա	Ճկուն խողովակ ½ "60սմ սառը ջրի ծորակների համար չժանգոտվող պողպատից, սանհանգույցի և ջրի միացման համար	հատ	680	17000	25	ք.Վեղի, Գայի 1	25
25	39715300	Սիֆոնի խողովակներ գլխիկով Ozbest	Ozbest-plast LTD, Թուրքիա	Լվացարանի սիֆոններ պլաստմասայից, գլխիկով	հատ	440	13200	30	ք.Վեղի, Գայի 1	30
26	44411700	Զուգարանակոնքի մեխանիզմ NOVA	Nova plastik LTD Թուրքիա	Զուգարանակոնքի մեխանիզմ վերևից միացվող (поплавок)	հատ	3450	17250	5	ք.Վեղի, Գայի 1	5
27	44411700	Զուգարանակոնքի մեխանիզմ NOVA	Nova plastik LTD Թուրքիա	Զուգարանակոնքի մեխանիզմ տակից միացվող (поплавок)	հատ	3450	51750	15	ք.Վեղի, Գայի 1	15
28	44411720	Զուգարանակոնքի կափարիչ Ozbest	Ozbest-plast LTD, Թուրքիա	Կափարիչ նախատեսված զուգարանակոնքի նստատեղի համար	հատ	2450	49000	20	ք.Վեղի, Գայի 1	20
29	34928480	Աղպամաններ ոտնակով Zambak	Zambak plastik Թուրքիա	Աղպամաններ ոտնակով 10լ տարողությամբ	հատ	2800	28000	10	ք.Վեղի, Գայի 1	10
31	31681410	Բալգարկի քար LUGA	Лужский абразижный завод, ՌԴ	Կտրող սկավառակ, 220մմ տրամագծով, 3մմ հաստությամբ, (արծիվ նկարով)	հատ	1000	10000	10	ք.Վեղի, Գայի 1	10
32	44315200	Եռակցման էլեկտրոդ 3մմ-ոց GEKA	GEKA LTD Թուրքիա	3մմ հաստությամբ, փոփոխական հոսանքի համար, <Ասկանյակ> մակնիշի	տուփ	3900	3900	1	ք.Վեղի, Գայի 1	1
36	44411300	Լվացարան Santeri	Угракерам ЗАО, ՌԴ	Կոմպլեկտը ներառում է լվացարանը և ոտքը, լվացարանի ուղղանկյուն մասի երկարությունը 55սմ	հատ	16000	48000	3	ք.Վեղի, Գայի 1	3
38	44521120	Դռան ներսի փական Зенит	ооо зенит-авто, ՌԴ	Դռան փական՝ չափսերը՝ 24սմ բարձրու -թյան, 3սմ լայնությամբ, բանալիներով, միջուկով, պողպա տից, գործարանային փաթեթավորմամբ: բարձր որակի	հատ	9900	118800	12	ք.Վեղի, Գայի 1	12
42	31685000	Էլեկտրական երկարացման լար 3մ, Makel	Makel LTD Թուրքիա	Երկարությունը՝ 3 մետր, 2 X 2,5 մմ² էլեկտրական լարով, 3 տեղանոց վարդակով:	հատ	1200	6000	5	ք.Վեղի, Գայի 1	5
43	31685000	Էլեկտրական երկարացման լար 5մ, Makel	Makel LTD Թուրքիա	Երկարությունը՝ 5 մետր, 2 X 2,5 մմ² էլեկտրական լարով, 3 տեղանոց վարդակով:	հատ	1500	7500	5	ք.Վեղի, Գայի 1	5
45	31531300	Տնտեսող լամպեր (Լամպ Էկոնոմ, 63 վտ, 190 մմ, E27, 220Վ) Ziside	Ziside-el co.,LTD, Չինաստան	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 63 W (325W) անվանական հզորությամբ, E27, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող [illegible]	հատ	1900	57000	30	ք.Վեղի, Գայի 1	30

Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2018թ.

46	31531300	Տնտեսող լամպ 40W Ziside	Ziside-el co.,LTD, Չինաստան	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 40 Վտ անվանական հզորությամբ, E27, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող	հատ	800	20000	25	ք.Վեդի, Գայի 1	25
47	31531300	Տնտեսող լամպ 20W Ziside	Ziside-el co.,LTD, Չինաստան	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 20 Վտ անվանական հզորությամբ, E27, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի.	հատ	700	17500	25	ք.Վեդի, Գայի 1	25
49	31521420	լամպ՝ լյումինեսցենտային Dupro	Dupro LTD, Չինաստան	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U- ձև, G-13 տիպի լամպակոթով, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախակա նությամբ, 120 սմ՝: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրա սարքավորումներին ներկայացվող պահանջ ների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	400	10000	25	ք.Վեդի, Գայի 1	25
50	31686000	Խրոց Makel	Makel LTD Թուրքիա	Խրոց	հատ	230	6900	30	ք.Վեդի, Գայի 1	30
52	31588300	Վարդակ ներքին մոնտաժման հողանցումով երկբևեռ Makel	Makel LTD Թուրքիա	Վարդակ ներքին մոնտաժման հողանցումով միաբևեռ.	հատ	800	16000	20	ք.Վեդի, Գայի 1	20
59	31531690	Ստարտյոր Dupro	Dupro LTD, Չինաստան	Ստարտյոր նախատեսված լյումինեսցենտային լամպերի համար	հատ	144	3600	25	ք.Վեդի, Գայի 1	25
ԸՆԴԱՄԵՆԸ				***	***	***	630760	***	***	***

ԳՆՈՐԴ
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ Վեդի մ/ճ
Հ/Հ 247763031777
ՀՎՀՀ 04104551
տնօրեն Վ. Մաթևոսյան

ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Լիդեր Քոմփանի» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2թ., 13շ., 15 բն
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոցի մ/ճ
Հ/Հ 16043024016000
ՀՎՀՀ 00125923
Տնօրեն՝ Ա. Զաքարյան

ստորագրություն Կ.Տ

Հավելված N 2
«20» փետրվարի 2018թ. կնքված
N ՎԾ-ԳՀԱՊՁԲ-18/10-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
8	39831243	լվացքի փոշի «Կալգոն» (հաբ) Calgon	0	0	2600	5200	7800	10400	13000	15600	18200	20800	23400	26000	26000
14	39839200	Գոգաթիակ Zambak	0	0	225	450	675	900	1125	1350	1575	1800	2025	2250	2250
15	39224331	Պլաստմասե դույլ 10լ OVALPLAST	0	0	546	1092	1638	2184	2730	3276	3822	4368	4914	5460	5460
16	42711160	Լվացքի թաս մեծ 40լ OVALPLAST	0	0	1680	3360	5040	6720	8400	10080	11760	13440	15120	16800	16800
17	18421130	Բանվորական ձեռնոցներ Handcare	0	0	445	890	1335	1780	2225	2670	3115	3560	4005	4450	4450
18	33721000	Միանգամյա ածելի «Բիք» մետալ 5հ, BIC	0	0	1280	2560	3840	5120	6400	7680	8960	10240	11520	12800	12800
19	33761000	Զուգարանի թուղթ ռուլոնով Skarlet	0	0	3680	7360	11040	14720	18400	22080	25760	29440	33120	36800	36800
21	19641000	Պոլիէթիլենային տոպրակներ, պարկեր 30լ Armenia PLAST	0	0	770	1540	2310	3080	3850	4620	5390	6160	6930	7700	7700
22	30192210	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական,մեծ, Santa monika	0	0	60	120	180	240	300	360	420	480	540	600	600
23	39715300	Ճկուն խողովակներ 1/2 " 40սմ NOVA	0	0	1650	3300	4950	6600	8250	9900	11550	13200	14850	16500	16500
24	39715300	Ճկուն խողովակներ 1/2 " 60սմ NOVA	0	0	1700	3400	5100	6800	8500	10200	11900	13600	15300	17000	17000
25	39715300	Սիֆոնի խողովակներ գլխիկով Ozbest	0	0	1320	2640	3960	5280	6600	7920	9240	10560	11880	13200	13200
26	44411700	Զուգարանակոնքի մեխանիզմ NOVA	0	0	1725	3450	5175	6900	8625	10350	12075	13800	15525	17250	17250
27	44411700	Զուգարանակոնքի մեխանիզմ NOVA	0	0	5175	10350	15525	20700	25875	31050	36225	41400	46575	51750	51750
28	44411720	Զուգարանակոնքի կափարիչ Ozbest	0	0	4900	9800	14700	19600	24500	29400	34300	39200	44100	49000	49000
29	34928480	Աղպամաններ ոտնակով Zambak	0	0	2800	5600	8400	11200	14000	16800	19600	22400	25200	28000	28000
31	31681410	Բալզարկի քար LUGA	0	0	1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000	10000	10000

32	44315200	Եռակցման էլեկտրոդ 3մմ-ոց GEKA	0	0	390	780	1170	1560	1950	2340	2730	3120	3510	3900	3900
36	44411300	Լվացարան Santeri	0	0	4800	9600	14400	19200	24000	28800	33600	38400	43200	48000	48000
38	44521120	Դռան ներսի փական Зенит	0	0	11880	23760	35640	47520	59400	71280	83160	95040	106920	118800	118800
42	31685000	Էլեկտրական երկարացման լար 3մ, Makel	0	0	600	1200	1800	2400	3000	3600	4200	4800	5400	6000	6000
43	31685000	Էլեկտրական երկարացման լար 5մ, Makel	0	0	750	1500	2250	3000	3750	4500	5250	6000	6750	7500	7500
45	31531300	Տնտեսող լամպեր (Լամպ էկոնոմ. 63 վտ, 190 մմ, E27, 220Վ) Ziside	0	0	5700	11400	17100	22800	28500	34200	39900	45600	51300	57000	57000
46	31531300	Տնտեսող լամպ 40W Ziside	0	0	2000	4000	6000	8000	10000	12000	14000	16000	18000	20000	20000
47	31531300	Տնտեսող լամպ 20W Ziside	0	0	1750	3500	5250	7000	8750	10500	12250	14000	15750	17500	17500
49	31521420	լամպ՝ լյումինեսցենտային Dupro	0	0	1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000	10000	10000
50	31686000	Խրոց Makel	0	0	690	1380	2070	2760	3450	4140	4830	5520	6210	6900	6900
52	31588300	Վարդակ ներքին մոնտաժման հողանցումով երկքեռ Makel	0	0	1600	3200	4800	6400	8000	9600	11200	12800	14400	16000	16000
59	31531690	Ստարտյոր Dupro	0	0	360	720	1080	1440	1800	2160	2520	2880	3240	3600	3600
ԸՆԴԱՄԵՆԸ			0	0	63076	126152	189228	252304	315380	378456	441532	504608	567684	630760	630760

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

«Վեղու ծննդատուն» ՓԲԸ

ք.Վեղի, Գայի 1

«Արդշինբանկ» ՓԲԸ Վեղի մ/ճ

Հ/Հ 247763031777

ՀՎՀՀ 04104551

տնօրեն՝ Վ. Մաթևոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Լիդեր Քոմփանի» ՍՊԸ

ք. Երևան, Դավիթաշեն 2թ., 13շ., 15 բն

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոցի մ/ճ

Հ/Հ 16043024016000

ՀՎՀՀ 00125923

Տնօրեն՝ Ա. Զաքարյան

/ստորագրություն/

Կ.Տ

«ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ»
"LIDER COMPANY"
"ЛИДЕР КОМПАНИ"
00125923

Հավելված N 3
« 20 » « փետրվարի» 2018 թ. կնքված
N «ՎԾ-ԳՀԱՊՁԲ—18/10-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Լիդեր Քոմփանի» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 2թ., 13շ., 15 բն
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոցի մ/ճ
Հ/Հ 16043024016000
ՀՎՀՀ 00125923

Պատվիրատու
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
գտնվելու վայրը՝ ք.Վեդի, Գայի 1
hh 247763031777
ԱՇԻԲ, Վեդի մ/ճ
Հվhh 04104551

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄԱՆՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 20 » « հունվարի » 2018 թ.

Պայմանագրի համարը՝ ՎԾ-ԳՀԱՊՁԲ-18/10-1

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2018թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 20 » « փետրվարի» 2018 թ. կնքված
N «ՎԾ-ԳՀԱՊՁԲ—18/10-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն